Պատմություն և մշակույթ 2025 № 22 (1)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.1.208

The Role of the Yerevan Faience Plant in Urban Lifestyle in the Middle of the XX Century

Meri Avetisyan
https://orcid.org/0000-0001-9339-1060
Museum of Folk Arts, Master of Ethnography
meryavetisyan1984@gmail.com

Keywords: faience, Armenian crystal, Yerevan, industry, utensils, urban life, traditions, trademark.

The integration of the Yerevan Faience Plant into Yerevan daily life is important for several reasons. Firstly, from the point of view of consumer services, the plant's products ensured the availability of necessary items for different social strata. However, it should be noted that thanks to its work, the plant went beyond the boundary of an entity of exclusively industrial importance and managed to take on other functions that were associated, in particular, with the formation of an urban lifestyle: for example, the plant managed to form a new level of taste and fashion in the society, formed a certain attitude towards utensils, taught people to bring beauty into everyday life.

To the honor of the plant, it should be noted that the plant managed to solve the tasks assigned to it in the economic and socio-cultural sphere. Now, in connection with the new fashion standards and the variety of goods that the market offers, the plant's products are gradually being squeezed out of everyday life and transferred to museums. Despite this, the society continues to warmly treat the plant's products.

Երեվանի հախճապակու գործարանի դերը քաղաքային կենցաղում XX դարի կեսերին

Մերի Ավետիսյան
Ժողովրդական արվեստների թանգարան, ազգագրության մագիստրոս

Հիմնաբառեր՝ հախճապակի, հայճենապակի, Երևան, արդյունաբերություն, սպասք, քաղաքային կենցաղ, ավանդույթներ, ապրանքանշան:

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 208-217

Received: 15.06.2025
Revised: 13.08.2025
Accepted: 18.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Երևանի հախճապակու գործարանի ինտեգրումը երևանյան կենցաղ կարևորվեց մի քանի տեսանկյունից: Նախ գործարանի արտադրանքը կենցաղը սպասարկելու առումով ապահովում էր անհրաժեշտ իրերի հասանելիությունը սոցիալական տարբեր շերտերի համար: Սակայն պետք է նշել, որ գործարանը իր գործունեության շնորհիվ դուրս եկավ միայն արդյունաբերական նշանակության օբյեկտ լինելու սահմաններից, կարողացավ իր վրա վերցնել այլ գործառույթներ, որոնք հատկապես միտված էին քաղաքային կենցաղի իմիջի ձևավորմանը. օրինակ հասարակության մեջ կարողացավ սահմանել ճաշակի ու նորաձևության նոր նշաձող, ձևավորեց որոշակի վերաբերմունք սպասքի հանդեպ, սովորեցրեց գեղեցիկը կենցաղ բերել:

Ի պատիվ գործարանի, հարկ է նշել, որ թե՛ տնտեսության, թե՛ սոցիալ–մշակութային դաշտում իր առջև դրված խնդիրները գործարանը կարողացավ հաղթահարել: Այժմ՝ կապված նորաձևության նոր չափորոշիչների և շուկայի առաջարկած այլընտրանքային բազմազանության հետ, գործարանի արտադրանքը կամաց-կամաց դուրս է մղվում կենցաղից և թանգարանացվում: Հակառակ այս ամենի կարծես այլընտրանք չունի մինչ օրս շարունակվող գործարանի արտադրանքի հանդեպ ունեցած հասարակության ջերմ վերաբերմունքը:

Роль Ереванского фаянсового завода в городском быту в середине XX века

Мери Аветисян
Музей народного искусства, магистр этнографии

Ключевые слова: фаянс, армфарфор, Ереван, промышленность, утварь, городской быт, традиции, торговая марка.

Интеграция Ереванского фаянсового завода в ереванский быт важна по нескольким причинам. Во-первых, с точки зрения бытового обслуживания продукция завода обеспечивала доступность необходимых предметов для разных социальных слоев. Однако следует отметить, что благодаря своей работе завод вышел за рамки объекта исключительно промышленного назначения и сумел взять на себя и другие функции, которые были связаны в особенности с формированием образа городской жизни: например, завод сумел сформировать в обществе новую планку вкуса и моды, сформировал определенное отношение к утвари, научил привносить красоту в быт.

К чести завода следует отметить, что завод сумел решить поставленные перед ним в экономической и социально-культурной сфере задачи. Сейчас в связи с новыми стандартами моды и разнообразием товаров, которые предлагает рынок, продукция завода постепенно вытесняется из быта и переходит в музеи. Несмотря на это, общество по-прежнему хорошо относится к продукции завода.

* * *

Ներածություն: 1947թ. Երևանում հիմնադրվում և Խորհրդային Հայաստանի Տեղական արդյունաբերության մինիստրության ենթակայության տակ [ՀԱԱ, ֆ1541, ց.2, թ.5] իր գործունեությունն է ծավալում Երևանի հախճապակու գործարանը: Գործարանի հիմնական

խնդիրն էր կազմակերպել ճենապակյա, հախճապակյա, կերամիկական լայն սպառման կենցաղային և դեկորատիվ գեղարվեստական իրերի արտադրությունը, ինչպես նաև պատրաստի արտադրանքի առաքումը ՍՍՀՄ ողջ տարածք, Չեխոսլովակիա, Լեհաստան, Հարավսլավիա: Համաձայն վերը նշված մինիստրության 1975թ. հուլիսի 10-ի Հ.138 հրամանի [ՀԱԱ, ֆ 1541, ց.3, թ.2-3] կազմակերպվում է «Հայճենապակի» արտադրական միավորումը, որի կազմի մեջ մտնում էին Երևանի հախճապակու, Արտաշատի բրուտախեցեգործական և ճենապակու գործարանները: Միավորումը աշխատում էր Ռուսաստանից և Ուկրաինայից ներմուծվող հումքով, տեղական, ճապոնական ու գերմանական սարքավորումներով: Թրծման վառարանների և գնդիկավոր աղացների շնորհիվ գործարանում ողջ արտադրական գործընթացը մեքենայացվում էր: Ձեռնարկության ամենածաղկուն շրջանը համարվել է 1970-ական թվականները, երբ գործարանը ուներ շուրջ 2500 աշխատակից [Հարությունյան Էմմա, Երևանի հախճապակու գործարան. փխրուն և անկոտրում] և թողարկում էր տեղական և արտերկրյա շուկայում մեծ պահանջարկ ունեցող շուրջ 157 [Ենոքյան, 01,08.2023] արտադրատեսակներ: Պայմանավորված հումքի ներմուծման, արտադրողի և սպառողի միջև հաճախ տեղի ունեցող անհամաձայնություններով, գործարանը երբեմն կանգնում էր անհաղթահարելի թվացող դժվարությունների առջև: Թերևս այս էր պատճառը նաև, որ միավորման մասնագետները սկսում են հնարավորություններ փնտրել տեղական հումքից հախճապակի ստանալու համար և այդպիսի մի փորձ անում են Արցախում՝ Հադրութի շրջանի Դրախտիկ գյուղում հիմնելով գործարանի մասնաճյուղ [Խորհրդային Ղարաբաղ, 04.09.1990, 2-5], որտեղ աշխատում էին տեղական կավահողով՝ պահելով սերտ համագործակցությունը մասնաճյուղերի հետ: Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկությունների սեփականաշնորհման եղանակով գործարանը 1996թ. հուլիսի 5-ին ՀՀ կառավարության Թ.437 որոշմամբ սեփականաշնորհվում է [ՀԱԱ, ֆոնդ1541,ց.3,թ2-3]:

Իր գործունեության տարիների ընթացքում գործարանի արտադրանքը իրացվել է տարբեր ապրանքանշաններով, որոնք մասնագետները դասակարգել են երկու խմբի՝ առաջինը կարմիր, հայատառ «ԵՐԵՎԱՆ» գրությունն էր, որը հատուկ էր Խորհրդային Հայաստանի ներքին շուկայի սպառման ապրանքատեսակներին, երկրորդը՝ ռուսատառ գրությամբ էին՝ «ФАЯНСОВУЙ ЗАВОД ЕРЕВАН» [Ереванский фаянсовый завод, Антикварный салон «СОВ-АРТ» sov-art@bk..ru], որոնք բնորոշ էին Հայաստանի սահմաններից դուրս սպառվող ապրանքատեսակներին: Ապրանքանշաններից ամենատարածվածը թերևս կենտրոնում հայերեն «Հ» տառ հիշեցնող շուռ եկած կավանոթի պատկերն է, որը կիռարկվեց «Հայճենապակի» արտադրական միավորման ձևավորումից հետո: Վերջինիս խորհրդաբանության շուրջ մեկնաբանությունները երկուսն են՝ որպես ճաք տված կավանոթի, կամ որպես կավի թրծման որակի խորհրդանիշ [Խաչատրյան, 05.03.2023]:

Բացի այս չորս ապրանքանշաններից, որոնք գործարանի գոյության տարբեր ժամանակաշրջաններում կիրառվել են, հայտնի են նաև Երևանի հախճապակու գործարանի առաջին նկարչուհի -քանդակագործ Հռիփսիմե Սիմոնյանի կողմից արված ապրանքանշանի այլ էսքիզներ, որոնք մեր ուսումնասիրությունների արդյունքում գործարանի արտադրած սպասքի նմուշներից որևէ մեկի պարագայում չենք հայտնաբերել:

Հարկ է նշել, որ գործարանի վերաբերյալ ՀՀ ԱԱ նյութերը բավականին սուղ են և հիմնականում վերաբերում են գործարանի 1970-ական թվականներից մինչև 1990-ական թվականի գործունեությանը, ինչը Հայաստանի ճարտարապետների միությունը հիմնավորում է Խորհրդային Հայաստանի Արդյունաբերական շինարարության նախարարության արխիվի հրդեհից ոչնչացումով: Իրավիճակը առավել հասկանալի դարձնելու նպատակով անհրաժեշտ է նշել, որ 1965-ին Երևանի հախճապակու գործարանը, որպես արդյունաբերական նշանակության օբյեկտ գործել է հենց այս նախարարության ենթակայության ներքո և գործարանի մասին ողջ նյութը հետագայում պահպանվել է նշված նախարարության արխիվում: Սակայն այս ուսումնասիրության շրջանակներում մեր առաջնային ասելիքը գործարանի քաղաքային կենցաղում ձևավորած առանձնահատկությունների շուրջ է:

Գործարանը իր արտադրանքի շնորհիվ դարձավ հասարակության առօրյայի մաս: Քաղաքային բնակարաններում հաճախ էին մտերմիկ զրույցներ հյուսվում գործարանում ծնունդ առած նրբագեղ սպասքով մատուցվող մի գավաթ թեյի կամ սուրճի շուրջ: Տանտիրուհիների սպասքի հանդեպ ունեցած վերաբերմունքն ու հետաքրքրվածությունը պատճառ էին դառնում ամեն անգամ հյուրերին սպասքի նոր տեսակներով զարմացնելու, միմյանց հետ կիսվելու թե որտեղի՞ց և ինչպե՞ս կարողացան ձեռք բերել այս կամ այն նմուշը: Հատկապես խորն էին այն կանանց անհանգստությունները, ովքեր հարսնացու աղջիկներ ունեին և ավանդական օժիտի սպասքի պատշաճ համալրումները մի տեսակ պատվի հարց էր, հետաքրքրասեր հարևանների և նոր ձևավորվող խնամիության շրջանակներում: Բանասացները երբեմն-երբեմն խոսքը ընդհատում էին, արդարանալով, թե այն ժամանակ հաճախ հազար ու մի ծանոթ էին խառնում՝ անհրաժեշտ ապրանքը ձեռք բերելու համար: «Ծանոթ խառնելու» մշակույթի պատճառները առաջին հայացքից անհասկանալի էին, որովհետև գործարանի արտադրանքը վաճառվում էր խանութներում և ցանկացողները առանց խոչնդոտի ձեռք էին բերում: Միայն հետո պարզ դարձավ, թե որքան կարևոր էր ծանոթը արտասահմանյան ապրանքանշանով երևանյան արտադրության սպասք ունենալու համար [Գաբրիելյան, 21.06.2023]:

Առհասարակ գործարանն իր գոյությամբ երևանցիների առօրյա էր բերել մի շարք ավանդույթներ, որոնք հատկապես տեղավորվում էին հյուրընկալության ազգային առանձնահատկությունների սահմաններում, երբ Երևան ժամանած հյուրերին ըստ առժանվույն հյուրընկալելը ծիսակարգի նմանվող պարտադիր արարողությունների շարք էր ենթադրում, իսկ բառիս ամենաուղիղ իմաստով Երևանի հախճապակու գործարանը անմասն չէր հյուրընկալության այդ «ծիսակարգից»: Գործարանի կողմից ջերմ հյուրընկալությամբ էին ավարտվում նաև Հայաստան ժամանած պաշտոնյաների այցերը: Նույնչափ հյուրընկալ ընդունելության է արժանանում երեսուն տարվա ընդմիջումից հետո XX դարի 60-ականներին Հայաստանում գտնվող Խորհրդային դիվանագիտության դեմքերից մեկը՝ Համազասպ Հարությունյանը: Գլխավոր ինժեներ Անահիտ Թումանյանը՝ մեծ բանաստեղծի թոռնուհին, անձամբ է հյուրին հանձնում ընծան՝ հախճապակե սափորը: Դեռատի կնոջ գեղեցկությամբ հրապուրված Համազասպ Հարությունյանը ամուսնության առաջարկ է անում Անահիտին և նրանք կարճ ժամանակ անց ամուսնանում են [Համազասպ Հարությունյան.խորհրդային դիվանագիտության հայ ասպետը]: Գործարանը մասնակից էր նաև Երևանում կատարվող հիշարժան իրադարձությունների և հայտնի մարդկանց հոբելյանների միջոցառումներից,

քաղաքային իշխանությունները հենց նրանց էին հանձնարարում ամենապատասխանատուն՝ միջոցառման առթիվ պատրաստվող հուշանվերը: Ա.Իսահակյանի, Հ.Թումանյանի, Ս.Կապուտիկյանի տուն-թանգարաններում պահպանվում և ցուցադրվում են հատուկ նրանց պատվին պատրաստված սափորները: Գերմանական գրականության տիտաններից մեկի՝ Գյոթեի 250 ամյա հոբելյանի առթիվ արտադրված, այժմ Մայնի Ֆրանկֆուրտում գտնվող հախճապակե սափորը ևս Երևանի հախճապակու գործարանի եզակի օրինակով արտադրված նմուշներց է:

Գործարանի ինտեգրումը հասարակական կենցաղ կարծում եմ կապված էր նաև այն անհատականությունների հետ, որոնց մասնագիտական հմտությունների շնորհիվ գործարանի արտադրանքը սիրելի դարձավ: Նրանցից էր հայ քանդակագործ-խեցեգործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարչուհի Հռիփսիմե Սիմոնյանը, ում մուտքը գործարան կարևորվեց երկու նշանակությամբ: Նախ որ, նկարչուհի–կերամիստի մասնագիտական բարձր որակների շնորհիվ գործարանի արտադրանքը որակապես բարձրացավ և որ ամենակարևորն է՝ մինչ այդ Խորհրդային միության հախճապակի արտադրող գործարանների ձևանմուշներով արտադրանք տվող Երևանի հախճապակու գործարանը ունեցավ սեփական ձեռագիրը, ինչը փրկեց արտադրական փակուղու առջև կանգնելու վտանգից:

-Եթե չունես շատ բան հյուրասիրելու, հյուրասիրիր սպասքով [Գրիգորյան, 25.07.2023]- սպասքի հանդեպ ունեցած այսպիսի մոտեցմամբ Հռիփսիմե Սիմոնյանը գործարանի մասսայական արտադրության համար ստեղծեց սպասքի էսքիզներ և մանրաքանդակներ: Նա իր օրինակով սովորեցրեց աշխատանքի հանդեպ վերաբերմունք ունենալու առանձնահատկությունը, ինչը օրինաչափ դարձավ գործարանում աշխատող յուրաքանչյուր աշխատակցի համար: 1948թ. գործարանի գլխավոր նկարչի պաշտոնը զբաղեցնող նկարչուհին վստահ էր, որ իր գեղազարդած յուրաքանչյուր պնակ, սափոր, կամ կենցաղը սպասարկող որևէ իր գործառութային կարևորությունից զատ, պետք է ունենա նաև գեղագիտական դաստիարակչության միտում: Եվ պատահական չէ, որ գործարանը իր արտադրանքով քաղաքային միջավայրում գեղագիտական ընկալումների նոր սահմանագիծ ուրվագծեց:

Երևանի հախճապակու գործարանի արտադրանքին հատուկ ինքնատիպությունը առավել երևելի էր արձանիկների արտադրության մեջ: Ասում են, գործարանի գեղարվեստական արտադրամասի հիմնադիր և երկար տարիների ղեկավար Վահան Տերունին, խստապահանջությամբ էր վերահսկում արձանիկների արտադրության ողջ գործընթացը. մի հայացքով ամբողջից առանձնացնում էր այն արձանիկները, որոնց հագուստի երանգավորումն անգամ չէր համապատասխանում նախնական էսքիզին և պահանջում էր անմիջապես համապատասխան տեսքի բերել: Աշխատանքի հանդեպ այսչափ նվիրումն ու պատասխանատվությունը մի գուցե արդյունք էին այն գիտակցման, որ բնակարանների ներքնատեսքի հարդարանքից զատ հանձն են առել ազգային գաղափարախոսության քարոզչություն, որը յուրացվում էր հասարակության ամենատարբեր շերտերում: Հարդարասեղանների, դաշնամուրների վրա, երբեմն էլ սպասքապահարանների թափանցող դռների հետևից երևացող Վահան Տերունու հեղինակած Հովհաննես Թումանյանի գրական կերպարները՝ «Անուշը», «Սարոն», «Հովիվը գառների հետ», Խաչատուր Միրիջանյանի «Օթելլո»ի կերպարով Վահրամ Փափազյանը, «Սայաթ Նովան», Ռաֆիկ Պետրոսյանի «Աստվածուհի Նանեն»,

«Հազարան բլբուլը», «Ախթամարը», «Սափորով աղջիկը», Արտո Չաքմաքչյանի, «Խաչատուր Աբովյան»ը, «Սասունցի Դավիթ»ը, Հռիփսիմե Սիմոնյանի «Ուզունդարա պարը», Թերեզա Միրզյանի «Բալետի պարուհին» այսօր էլ երևանցիների հուշերում ջերմ հիշողություններ են արթնացնում: Դրանցից շատերը դեռ շարունակում են զարդարել մեր քաղաքացիների բնակարանները՝ արդեն որպես ընտանեկան պատմությունների կրողներ: Բանասացս [Հարությունյան, 25.08.2023] «Անուշին» թանգարանին ի պահ հանձնելու իմ առաջարկը մերժեց՝ պատճառաբանելով, որ արձանիկը իրենց ընտանիքի վերամիավորման խորհրդանիշն է դարձել և փոխանցվում է սերնդեսերունդ: Մինչև 1976թ. արտադրված այս արձանիկների հանդեպ հանրության հատուկ վերաբերմունքը նկատելի է նաև 1955թ. «Գրական թերթ» [Գրական թերթ, 18.12.1955, 3] հերթական համարում տպագրված հոդվածից, որտեղ նկարագրվում է թե ինչպես են հոդվածագրի կողմից «Զարդը» բնորոշմանը արժանացած Հռիփսիմե Սիմոնյանի «Ուզունդարա պարը» արձանիկը, որպես հայ մշակույթի խորհրդանիշ նվիրում Երևան ժամանած սիբիրցի հյուրին:

1968թ. հոկտեմբերին Երևանը նշում էր հիմնադրման 2750 ամյակը: Այս տոնակատարությունների առթիվ Երևանի հախճապակու գործարանը հատուկ հանձնարարություն ուներ՝ արտադրել թեմատիկ հուշանվերներ ափսեների, սափորների տեսքով, որոնցից առանձին նմուշներ պահպանվում և ցուցադրվում են Երևանի պատմության թանգարանում: Պետք է նկատել, որ ժամանակի ընթացքում նշված հուշանվերների պարագայում, որոնք այսօր դարձել են թանգարանային ցուցանմուշներ և Երևանի պատմության թանգարանի մշտական ցուցադրության մեջ մշակութային հաղորդակցության միջոցով թանգարանի այցելուներին պատմում են խորհրդային Երևանի մշակութային կյանքից մի պայծառ դրվագ:

Առանձին ուսումնասիրության նյութ է Մոսկվայի Օլիմպիադայի առիթով «Հայճենապակի» արտադրական միավորման հատուկ արտադրանքը: 1980թ. Մոսկվայում կայացած Օլիմպիադայից որպես անցյալի ջերմ հիշողություն երևանցիները իրենց բնակարաններում մինչ այսօր պահպանում են Հայճենապակի ա/մ կողմից արտադրված արջուկները:

Մոսկվան 1980թ. կայանալիք օլիմպիադային սկսել էր պատրաստվել դեռ տարիներ առաջ և միջոցառման խորհրդանիշի փնտրտուքները մեկնարկել էին Խորհրդային միության նկարիչների շրջանում մրցույթով: Օլիմպիադայի կազմկոմիտեն ստացել էր շուրջ 40 000-ից ավել էսքիզներ, արդյունքում հաղթել էր Վիկտոր Չիժիկովի հորինած կերպարը [Որտե՞ղ է վայրէջք կատարել արջուկը]: Վիկտոր Չիժիկովի ստեղծած կերպարը համապատասխանում էր կազմկոմիտեի պահանջներին՝ կերպարը միևնույն ժամանակ պետք է ուժի և բարության խորհրդանիշ լիներ: Նույնիսկ Մոսկվայի Կենդանաբանական այգու տնօրենը պայմանականորեն որոշում է արջի տարիքը՝ երեք ամսական: Այնուհետև մեկնարկում է Խրհրդային միությունում հախճապակու արտադրություն ունեցող երկրներում օլիմպիական հախճապակե և ճենապակե արջուկների և արջուկների պատկերով տարատեսակ հուշանվերների արտադրությունը: Այս առիթով 1970-ականներին «Հայրենիքի ձայնը» [Հայրենիքի ձայն, 22.06.1977, 2] գրում է. Երևանի հախճապակու գործարանի նկարիչները հաջողությամբ իրականացրին «Օլիմպիադա-80»-ի կազմկմիտեի հատուկ առաջադրանքը. սկսվել է օլիմպիական հուշանվերների արտադրանքը: «Հայճենապակի» արտադրական միավորման Արտաշատի Բրուտա-խեցեգործական և ճենապակու գործարանի նկարչուհիներից Իրա Ադամյանը ժպիտով է հիշում օլիմպիական արջուկների արտադրման

տարիները՝ ընտանեկան արխիվից առանձնացնելով այն լուսանկարները, որոնք պատկերում են արջուկներին նկարազարդելու աշխատանքային գործընթացը: Օլիմպիական արջուկները, ոչ միայն դարձան «Օլիմպիադա-80»-ի խորհրդանիշները, այլ խորհրդային բնակարաններում կարողացան ձեռք բերել իրենց պատվավոր անկյունները: Օրինակ լրագրող Մարիաննա Փայտյանը հիշում է [Փայտյան Մարիաննա, Ինչպես ստեղծվեց օլիմպիական արջուկը, կամ Միշան արդեն 40 տարի է՝ մեր ընտանիքի անդամն է], թե ինչ դժվարությամբ էին ծնողները ձեռք բերել 1980թ. մինչ օրս իրենց տան «բնակիչ» օլիմպիական արջուկ Միշային, որովհետև օլիմպիադայից մեկ շաբաթ անց արդեն բոլոր վաճառասրահներում սպառվել էին արջուկները և թե ինչպիսի հատուկ վերաբերմունքի էր արժանանում երեխաների ձեռքից հեռու, բնակարանի ամենաբարձր պահարանի վրա դրված Միշան:

Եզրակացություն: Երևանի հախճապակու գործարանի ինտեգրումը երևանյան կենցաղ կարևորվեց մի քանի տեսանկյունից: Նախ գործարանի արտադրանքը կենցաղը սպասարկելու առումով ապահովում էր անհրաժեշտ իրերի հասանելիությունը սոցիալական տարբեր շերտերի համար: Սակայն պետք է նշել, որ գործարանը իր գործունեության շնորհիվ դուրս եկավ միայն արդյունաբերկան նշանակության օբյեկտ լինելու սահմաններից, կարողացավ իր վրա վերցնել այլ գործառույթներ, որոնք հատկապես միտված էին քաղաքային կենցաղի իմիջի ձևավորմանը. օրինակ հասարակության մեջ կարողացավ սահմանել ճաշակի ու նորաձևության նոր նշաձող, ձևավորեց որոշակի վերաբերմունք սպասքի հանդեպ, սովորեցրեց գեղեցիկը կենցաղ բերել: Ի պատիվ գործարանի, հարկ է նշել, որ թե՛ տնտեսության, թե՛ սոցիալ–մշակութային դաշտում իր առջև դրված խնդիրները գործարանը կարողացավ հաղթահարել: Այժմ՝ կապված նորաձևության նոր չափորոշիչների և շուկայի առաջարկած այլընտրանքային բազմազանության հետ, գործարանի արտադրանքը կամաց-կամաց դուրս է մղվում կենցաղից և թանգարանացվում: Հակառակ այս ամենի կարծես այլընտրանք չունի մինչ օրս շարունակվող գործարանի արտադրանքի հանդեպ ունեցած հասարակության ջերմ վերաբերմունքը:

Գրականության ցանկ

HAA, f.1451,c.2,t‘.5.
HAA, f.1451,c.3,t‘.2-3.
Grakan t‘ert‘ 1955, h.46, Zardê, S.Sekoyan,5.
Erevan amsagir, 2014, h.29, Erevani hakhchapaku gordzaran. p‘khrun ew ankot‘run, E. Harut‘unyan, 8.
Yerekoyan Erevan, 1964, h.123, G.Saloyan, 2.
Khorhrdayin Gharabagh t‘ert‘ 1990, h.67, Gerakat‘arum, G.Grigoryan, 2-5.
Hayrenik‘i dzayn1977, Haykakan hushanvernerê olimpiada-80-in, 2.

Նկարների ցանկ

Նկ.1, ապրանքանշան՝ Հ.Սիմոնյանի էսքիզով՝ լուսանկարը՝ Ա.Գրիգորյանի

Նկ.2, լուսանկարը՝ Է.Հարությունյանի արխիվից

Նկ.3, Երևանի հախճապակու գործարան, լուսանկարը՝ ՀԱԱ ֆոտոֆոնոֆոնդի

Նկ.4, Երևանի հախճապակու գործարան, լուսանկարը՝ ՀԱԱ ֆոտոֆոնոֆոնդի

Նկ.5, Երևանի հախճապակու գործարանի Արտաշատի մասնաճյուղ՝ լուսանկարը՝ Ի.Ադամյանի արխիվի

Նկ.6, « Սասունցի Դավիթ», հեղինակ՝ Ա.Չաքմաքչյան,ԵՊԹ հավաքածու

Նկ.7, գրաֆին՝ արտադրված Երևանի 2750ամյակի առթիվ, ԵՊԹ հավաքածու

Նկ.8 ափսե՝ արտադրված Երևանի 2750ամյակի առթիվ, ԵՊԹ հավաքածու